


# Ուսուցչի մասնագիտական զարգացման և կատարելագործման վերաբերյալ տեսությունների և հայեցակարգային մոտեցումների վերլուծություն

**Կարապետյան Արմինե Գ.**

*Մանկավարժության ամբիոն, հայցորդ,*

*Խ. Արվիանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0008-0155-3607>  
[karapetyan.armine.1979@mail.ru](mailto:karapetyan.armine.1979@mail.ru)

ՀՏԳ՝ 37. 013.73.1; EDN: RRCVHN

DOI: 10.58587/18292437-2025.2-156

**Հանգուցարաներ և բառակապակցություններ՝** մասնագիտական զարգացում և կատարելագործում, ինքնազարգացում, ռազմավարություն, կրթական համակարգ, մեթոդներ, տեխնոլոգիաներ, մեդիագրագիտություն, կառավարման սուբյեկտ, մանկավարժական մոտեցումներ

## **Анализ теорий и концептуальных подходов к профессиональному развитию и совершенствованию учителей**

**Карапетян Армине Г.**

*Соискатель кафедры педагогики,*

*Армянский государственный педагогический университет им. Х. Абовяна (Ереван, РА)*

**Аннотация:** Реформы, проводимые в настоящее время в системе образования, и требования, предъявляемые обществом к общему образованию, ставят новые цели и задачи как в подготовке специалистов, так и в их постоянном развитии и совершенствовании в процессе профессиональной деятельности.

Соответственно, изменились и стандарты профессионального развития и совершенствования учителей государственных школ. В этом контексте качество профессионального развития и совершенствования педагогов определяется разработкой стратегий и моделей их профессионального развития, формированием внутренних устойчивых мотивов и установок на педагогическую деятельность, постоянным развитием и обогащением методических и профессиональных знаний, усвоением новых методов и технологий, передового опыта и постоянным их обновлением.

Приведенные доводы свидетельствуют о том, что на современном этапе образовательных реформ и инноваций необходимо пересмотреть содержание общего образования, стратегию, формы, средства, процедуры, методы обучения, формы, средства, процедуры, принципы управления, функции, методы управляемых подсистем школы, выявить пути и средства реализации свободного выбора человека, развития его способностей и возможностей согласно положениям новой педагогики, представленным учителю, навыкам XXI века и современным требованиям цифровизации образования.

**Ключевые слова и словосочетания:** профессиональное развитие и совершенствование, саморазвитие, стратегия, образовательная система, методы, технологии, медиаграмотность, управленческий субъект, педагогические подходы

## **Analysis of theories and conceptual approaches regarding teacher professional development and improvement**

**Karapetyan Armine G.**

*PhD Applicant, Chair of pedagogy*

*Armenian state pedagogical university named after Kh. Abovyan (Yerevan, RA)*

**Abstract.** The reforms currently being implemented in the educational system and the demands placed on general education by society have set new goals and objectives for both the training of specialists and their continuous development and improvement during their professional activities.

Accordingly, the standards of professional development and improvement of public school teachers have also changed. In this context, the quality of teachers' professional development and improvement is determined by the development of their professional development strategies and models, the formation of internal stable motivations and attitudes towards pedagogical activity, the continuous development and enrichment of methodological and professional knowledge, the assimilation of new methods and technologies, advanced experience and their constant renewal.

The above arguments indicate that at the present stage of educational reforms and innovations it is necessary to reconsider the content of general education, strategy, forms, means, procedures, teaching methods, forms, means, procedures, management principles, functions, methods of managed school subsystems, to identify ways and means of realizing a person's free choice, development of his abilities and capabilities in accordance with the provisions of the new pedagogy presented to the teacher, 21st century skills and modern requirements for the digitalization of education.

**Keywords & phrases:** professional development and improvement, self-development, strategy, educational system, methods, technologies, media literacy, management subject, pedagogical approaches

Ներկայումս կրթական համակարգում իրականացվող բարեփոխումները, հասարակության՝ հանրակրթությանը ներկայացվող պահանջները նոր նպատակային կողմնորոշիչներ և խնդիրներ են առաջադրել ինչպես մասնագետների պատրաստության, այնպես էլ մասնագիտական գործունեության ընթացքում նրանց շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը:

Դրան համապատասխան փոխվել են նաև հանրակրթական դպրոցի ուսուցիչների մասնագիտական զարգացման և կատարելագործման չափանիշները:

Այդ համատեքստում ուսուցիչների մասնագիտական զարգացման և կատարելագործման որակը որոշվում է նրանց մասնագիտական կատարելագործման ռազմավարությունների, մոդելների մշակմամբ, մանկավարժական գործունեության նկատմամբ ներքին կայուն դրդապատճառների և վերաբերմունքի ձևավորվածությամբ, մեթոդական և մասնագիտական գիտելիքների շարունակական զարգացմամբ ու հարստացմամբ, նոր մեթոդների և տեխնոլոգիաների, առաջավոր փորձի յուրացմամբ ու դրանց անընդհատ նորացմամբ:

Վերը բերված փաստարկումները ենթադրում են, որ կրթական բարեփոխումների և նորամուծությունների արդի փուլում անհրաժեշտ է վերանայել ընդհանուր կրթության բովանդակությունը, ռազմավարությունը, ուսուցման մեթոդները, ձևերը, միջոցները, ընթացակարգերը, դպրոցում կառավարվող ենթահամակարգերի կառավարման սկզբունքները, գործառնությունները, մեթոդները, բացահայտել անձի ազատ ընտրության իրականացման, նրա ընդունակությունների և կարողունակությունների զարգացման ուղիներն ու միջոցներն ըստ ուսուցչին ներկայացվող նոր մանկավարժության դրույթների, 21-րդ դարի հմտությունների և կրթության թվայնացման ժամանակակից պահանջների:

Ներդպրոցական կառավարման և ուսուցիչների մասնագիտական որակների զարգացման փոխադարձ կապի հիմնախնդրի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այն կոչված է ապահովելու կառավարման հիմնախնդիրների լուծման արդյունավետ ուղիների որոնումը անձնակողմնորոշիչ կրթության հարացույցի և ժամանակակից մանկավարժական

մոտեցումների համատեքստում և դրանց ներդրումը հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացում:

Կառավարման սուբյեկտի կողմից իր ինքնազարգացման միջոցների և մեթոդների նկատմամբ ստեղծագործական մոտեցումը ենթադրում է մասնագիտական ինքնակատարելագործում, քանի որ անձը մասնագիտական գործունեության ընթացքում իրացնում է իր ստեղծագործական և մասնագիտական ներուժը՝ շարունակաբար կատարելագործելով մասնագիտական կարողունակությունները:

Ժամանակակից սիներգետիկական, համակարգային, գործունային ժողովրդավարական, կարողունակությունների վրա հիմնված, մարդաբանական, արժեքանական մոտեցումների համատեքստում մասնագիտական կատարելագործման հիմքը համարվում է ոչ միայն ուսուցչի նախապատրաստումը մանկավարժական գործունեության, այլև նրա անձնային որակների և մասնագիտական կարողունակությունների, հմտությունների զարգացման ու կատարելագործման համար համապատասխան ստեղծագործական-կրթական, սոցիալ-մշակութային միջավայրի ստեղծումը:

**Սիներգետիկ և համակարգային** մոտեցումները ենթադրում են մարդու զարգացման բնույթի գնահատում: Այս համատեքստում դիտարկվում է այն տեսակետը, որ ինքնակազմակերպման գործընթացների հետևանքով է ապահովվել մարդկային մտքի արագ զարգացումը, քանի որ մարդն ունակ է անընդհատ փոփոխման, նորացման, արարման, ստեղծագործելու, նրան բնորոշ է դրական ու բացասական փոխադարձ կապերի բարդ դիալեկտիկան:

**Գործունային մոտեցումը** ենթադրում է ուսուցչի կողմից դպրոցի կրթադաստիարակչական միջավայրի և մանկավարժական իրականության ստեղծագործական վերափոխում՝ իր հերթին հանդես գալով որպես իր ինքնազարգացման ուբյեկտ:

Հոգեբանության մեջ գործունային մոտեցման տեսանկյունից անձի զարգացումը տեղի է ունենում սուբյեկտի համար նշանակալի մասնագիտական գործունեության հաջող յուրացման, մանկավարժական ռեֆլեքսիայի իրականացման գործընթացում: Այդ նշանակում է, որ մասնագիտական կատարելիության կարելի է հասնել միայն ինչպես մասնագիտական գիտե-

լիքների և կարողունակությունների, այնպես էլ մանկավարժական մշակույթի և անհատական զարգացման միասնականության արդյունքում:

**Ժողովրդավարական մոտեցումը** ենթադրում է ուսուցչի կողմից ժողովրդավարական մշակույթի կարողունակությունների զարգացում, որոնք նրա մասնագիտական գործունեության ընթացքում ընդօրինակվում և յուրացվում են սովորողների կողմից:

**Կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը** ենթադրում է կյանքի տարբեր իրավիճակներում և ոլորտներում գիտելիքները ինքնուրույն գտնելու և դրանք գործնականում օգտագործելու անձի կարողությունների զարգացում:

Կրթության մարդասիրական հարացույցի տեսանկյունից այսօր էական նշանակություն է ձեռք բերում **մարդաբանական մոտեցումը**, որը ենթադրում է մարդասիրական գիտելիքի ուղղվածությունը դեպի սովորողի անձը, նրա անհատականությանը, հոգևոր աշխարհին, նրա անձնային արժեքներին և կյանքի իմաստին: Այն մանկավարժական գործողությունների որոշակի համակարգ է, որն արդյունավետորեն նպաստում է երեխայի՝ որպես բարձրագույն արժեքի, զարգացմանն ու ինքնորոշմանը: Այսօր հանրակրթության արդի բարեփոխումներն ու զարգացումները բնութագրվում են կրթության բովանդակության մարդասիրական ուղղվածությամբ:

Մարդաբանական մոտեցման հետ անմիջականորեն աղերսվում է **արժեքանական մոտեցումը**, որը մանկավարժագիտության մեջ դիտարկվում է որպես անձի շրջապատող իրականության, մշակութային արժեքների նկատմամբ պատկերացումների, արժեքային կայուն կողմնորոշումների և հուզաարժեքային հարաբերությունների ձևավորման միջոցների, մեթոդների և պայմանների ամբողջություն:

Նշված մոտեցումները, բնականաբար, թելադրում են ներդարացական կառավարման և ուսուցիչների մասնագիտական զարգացման ու կատարելագործման փոխադարձ կապի հիմնախնդրի նորովի իմաստավորման անհրաժեշտությունը:

Դրանք պահանջում են անհրաժեշտ նորամուծություններ ներմուծել կրթական գործընթացի նպատակադրություններում, որտեղ առաջնային պետք է լինեն դպրոցի մանկավարժական կոլեկտիվի արդյունավետ գործունեության իրականացման, մասնագիտական զարգացման և ինքնազարգացման խթանման համար միջոցների որոնումը և պայմանների ապահովումը:

Ուսուցիչների մասնագիտական կատարելագործման հիմնախնդրի գիտատեսական հիմնավորման համար առաջին հերթին դիտարկենք անձի զարգացման և ինքնազարգացման փիլիսոփայական-հոգեբանական տեսանկյունները:

Անձի զարգացման հիմնախնդիրը այսօր դաստիարակության և կրթության կարևորագույն ռազմավարական խնդիր է համարվում:

Պայմանավորված հասարակության գիտակցականում կատարվող շարունակական և խորը տեղաշարժերով՝ անձի զարգացման հիմնահարցը դեռևս վաղ ժամանակներից եղել է փիլիսոփաների ուսումնասիրությունների ու քննարկումների առարկա:

Մարդու էության մասին պատկերացումներում, տեսություններում դիտարկվում է մարդու մեջ սոցիալականի, գիտակցության, հոգևոր ներաշխարհի զարգացումը:

Փիլիսոփայության պատմության մեջ անձի ինքնակերտման և ինքնազարգացման գաղափարը խոր արմատներ ունի:

Անձի գոյության, զարգացման, ինքնազարգացման, ինքնաճանաչման, ինքնակերտման գաղափարները առաջադրվել և քննարկվել են դեռևս հույն փիլիսոփաներ Սոկրատեսի և Պլատոնի ժամանակներից:

Հույն փիլիսոփա Սոկրատեսը մարդու զարգացման ու ձևավորման հարցը, առաջին հերթին դիտարկեց բարոյականության և ինքնաճանաչողության տեսանկյունից. «Ճանաչի՛ր ինքդ քեզ»: Ըստ Սոկրատեսի՝ կրթության հիմքը **հարցասիրությունն է**, իսկ բարձրագույն առաքինությունը՝ **գիտելիքը**, ուստի պետք է գործել բանականությամբ: Նա գիտելիքը համարում էր մարդու վարքի միակ կարգավորիչը և չափի ստուգանիշը, քանի որ միայն գիտելիքն է վեհացնում մարդուն և որոշակի չափով մոտեցնում աստվածներին: Ըստ նրա՝ «...*գիտելիքից ուժեղ ոչինչ չկա, այն միշտ և ամեն ինչում հաղթում է հանույթին և մնացած ամեն ինչին*» [1, էջ 357]:

Նրա աշակերտ Պլատոնը անձի զարգացումն անմիջականորեն կապում էր խելացիորեն կազմակերպված դաստիարակության հետ՝ նշելով դեպի անձի կատարարելիություն տանող ուղիներն ու միջոցները (Պլատոն, «**Որդվոց դաստիարակությունը**») [1, էջ 358]:

Պլատոնի աշակերտ Արիստոտելը ( մ.թ.ա. 3-րդ դար) գտնում էր, որ մարդու մեջ ի սկզբանե դրված է զարգացման հնարավորությունը, սակայն այդ հնարավորությունն իրականացվում է դաստիարակության շնորհիվ, որը պետք է համապատասխանացնել նրա բնական զարգացմանը [1, էջ 111]:

Հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ անձի զարգացման և ինքնակատարելագործման, կամքի ազատության, մարդու ճանաչողական ունակությունների, դրանց զարգացման, բանականության ու զգայարանների գործառույթների, կրթության բազմաբնույթ հարցերին անդրադարձել է Մեսրոպ Մաշտոցը իր «Հանախապատում ճառեր» աշխատության մեջ [1, էջեր 96-97]:

6-րդ դարի հայ մեծ փիլիսոփա Դավիթ Անհաղթը անձի կատարելիությունը տեսնում էր նրա համակողմանի և ներդաշնակ զարգացման մեջ, անընդհատ կրթության պարագայում՝ այդ գործընթացի հաջողությունը կապելով ուսուցչի մասնագիտական պատրաստվածության հետ:

7-րդ դարի հայ մեծագույն մաթեմատիկոս, փիլիսոփա, տիեզերագետ, մանկավարժ Անանիա Շիրակացին անձի զարգացման վրա ազդող գործոնների մեջ առաջնային է համարել դաստիարակությունն ու կրթությունը, որոնց միջոցով է հնարավոր զարգացնել մարդու ժառանգական նախադրյալներն ու ընդունակությունները [2]:

Դեռևս 11-ից 12-րդ դարերի սահմանագծում մեծ մտածող, փիլիսոփա, մաթեմատիկոս, արվեստագետ, մանկավարժ Հովհաննես Իմաստասերը դիտարկելով անձի մասնագիտական զարգացման և դրանում կատարելիության հասնելու գաղափարը՝ պնդում է, որ միայն աշխատասիրության, համառ աշխատանքի շնորհիվ մարդը կարող է հասնել դրան, քանի որ. «ամենայն մակածություն և արուեստ մի ըստ միջոցն առ որ ավերագոյն վարժմանէ և ջերմ աշխատութենէ, անել և զեղեցկանալ բնատրեաց, նա և ուղղել սխալմանն՝ ի կրթասիրութենէ» [3, էջ 64]: Նա իր «Բան իմաստության» պոեմում քննարկում էր աշխատանքում, արվեստում ստեղծագործական կատարելիության հասնելու սկզբունքների և միջոցների հարցը:

Անձի զարգացման և ինքնակատարելագործման հիմնախնդրին անդրադարձել է նաև 15-րդ դարի Տաթևյան դպրոցի նշանավոր ներկայացուցիչ, փիլիսոփա, քերականագետ, մանկավարժ Առաքել Սյունեցին: Նա իր «Մեկնութիւն կամ համառօտ լուծմունք Սահմանաց՝ գրոցն Դավիթ Անհաղթի» և «Քերականութեան մեկնութիւնը» աշխատություններում անդրադարձել է սովորողների ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մեթոդաբանության, մեթոդների և միջոցների հարցերին՝ համաշխարհային մանկավարժական մտքի պատմության մեջ առաջին անգամ առաջ քաշելով ուսուցման գործընթացի տեխնոլոգիական ապահովման գաղափարը [1, էջ 223]:

Անձի զարգացման, ուսուցչի մասնագիտական զարգացման, ինքնակատարելագործման հիմնախնդրին անդրադարձել են նաև 19-20-րդ դարերի հայ մանկավարժներ Խ. Աբովյանը, Ն. Չորոյանը, Ղ. Ալիշանը, Գ. Սրվանձտյանը, Ստեփան Ոսկանը, Մ. Մամուրյանը, Ղ. Աղայանը, Ս. Մանդինյանը, Ա. Բահաթրյանը, Հ. Հինդիյանը և այլք:

Ուսուցչի մասնագիտական զարգացման և կատարելագործման մեր հայեցակարգի ձևավորման համար մեթոդաբանական հիմք են

հանդիսացել վերը դիտարկված հույն, հայ փիլիսոփաների և մանկավարժների հայեցակարգային մոտեցումներն ու տեսական դրույթները, ինչպես նաև կրթության արժեքների և նոր անձնաբանական մարդաբանության էության վերաբերյալ արժեքանական ուսումնասիրությունները (Լ. Ն. Ստոլովիչ, Վ. Կ. Շոխին, Մ. Ս. Կազան, Բ. Ս. Գեշունսկի, Գ. Պ. Վիժեցով, Վ. Վ. Կոյուկով, Վ. Ա. Սլաստենին, Գ. Ի. Չիժակովա, Լ. Վ. Թորգոմյան, Ռ. Ա. Մարդոյան և այլն), անձի ինքնազարգացման վերաբերյալ փիլիսոփաների, հոգեբանների և մանկավարժների հիմնարար տեսական դրույթները:

Այս տեսանկյունից հատկապես դիտարկել ենք Ն. Բերդյաևի, Ի. Կանտի, Մ. Կազանի, Գ. Լևինի, Ֆ. Նիցշեի, Ն. Ն. Մոյխսենի Վ. Սոլովյովի, Ի. Գ. Յուլերմանի, Ի. Ֆ. Շելինգի անձի ազատության, բարձրարժեքության՝ որպես նրա ինքնազարգացման կարևորագույն պայման, հայեցակարգային մոտեցումները:

Ըստ գերմանացի փիլիսոփա Ի. Կանտի՝ յուրաքանչյուր անձ ինքնին արժեք է, և պետք է հռչակել նրա գերակայությունը ցանկացած հանրության հանդեպ: Իմաստավորելով ազատությունը՝ որպես անձի լիարժեք ինքնիրացման պայման, նա հանգում է մարդու ազատության ու բարոյականության փոխկապվածության գաղափարին. «*Պիսկաստար ազատությունը, ըստ նրա, մարդկանց կողմից բարոյականության օրենքների կատարումն է*» [7]:

Գ. Լևինի կարծիքով՝ ազատության նվաճման ճանապարհին, անհատը պետք է զարգացնի արդյունավետ ու կառուցողական պահանջմունքներ, ձևավորի այդ պահանջմունքները համարժեք արտացոլող ցանկություններ, մշակի պահանջմունքների բավարարման կարողություններ և հմտություններ: Իսկ անձի զարգացման և ինքնիրացման համար անհրաժեշտ է ազատություն, քանի որ միայն ազատ մարդը կարող է ընտրած գործունեության բնագավառում նպատակներ առաջադրել և դրանց նվաճման համար օգտագործել արդյունավետ միջոցներ [8]:

Ն. Բերդյաևը անձի ինքնազարգացման ակունքները տեսնում էր նրա անընդհատ փոփոխման ընդունակության մեջ՝ ընդամին նշելով, որ «անձը անփոփոխություն է փոփոխության մեջ» [5, էջ 5]: Ընդ որում, նա մարդու մեջ տեսնում է երկու էություն՝ անհատ և անձ, մարդ անհատը մեկուսացում է ապրում, եսակենտրոն է և կոչված է պայքար մղելու հանուն կյանքի՝ հարմարվելու միջոցով պաշտպանվելով վտանգներից: Մարդ անձը, հաղթահարելով իր եսակենտրոն պարփակվածությունը, բացահայտում է իր էությունը, պաշտպանում է իր անկախությունը և արժանապատվությունը: Այս տեսան-

կյունից էլ նա անձի ինքնիրացումը տեսնում էր նրա կենսական ներուժի արդիականացման մեջ:

Ա. Ի. Պրիգոժինի, Ն. Ն. Մոյսեսենի դիտարկմամբ մարդը՝ որպես սոցիալական երևույթ, որպես հատուկ ամբողջական համակարգ, այլ համակարգերի պես իրականացնում է ինքնակազմակերպում, ինքնակարգավորում, ինչը նաև ինքնագարգացման պայման է [13, էջ 102]:

Մ. Կազանը, ելնելով մշակույթի համակարգային վերլուծության դիրքերից, նշում է, որ մարդը, արարելով աշխարհը, ստիպված է ստեղծագործաբար վերափոխել իրեն. «Մարդը մշտապես համալրում, զարգացնում, փոխում է ոչ միայն բնությանը տրվածը, այլև հենց իր ստեղծածը» [6, էջ 107], իսկ անհրաժեշտ արդյունքի ստացումը հնարավոր է միայն ընդունակությունների, բարոյականային հատկանիշների զարգացման, ինչպես նաև ներքին հակասությունների հաղթահարման և ինքնաբացասման հետևանքով [6, էջ 13]: Այդ բացասումն ու ներքին հակասությունն ապահովում են անձի ինքնագարգացումը, այսինքն՝ նրա անընդհատ առաջընթացը:

Ռուս փիլիսոփա Վ. Սոլովյովը նշում է, որ «յուրաքանչյուր մարդու կյանքը ստեղծագործություն է, ազատ ձգտում դեպի բարին» [17]: Այս տեսանկյունից անձի ինքնագարգացումը կարելի է դիտել որպես հոգեկան ներաշխարհի աստիճանական հարստացում մանկությունից մինչև հասունություն:

Հոգեբան Գ. Յուկերմանը այն գիտական համոզմանն է, որ սոցիալական, անձնային և էքզիստենցիալ մակարդակներով սեփական «Ես»-ի ճանաչման և հասարակական հարաբերություններին անձի հարմարման սահմանագծում անձը կառավարման ազդեցության օբյեկտից դառնում է հասարակական կյանքի սուբյեկտ՝ ծրագրելով «ինքնագարգացման անհատական հետագիծը» [18, էջ 23]:

Մանկավարժական հոգեբանության մեջ ուսուցիչների մասնագիտական զարգացման, կատարելագործման և կայացման հիմնախնդիրը դիտարկել են Ս. Գ. Վերշովսկին, Ֆ. Ն. Գոնոբոլինան, Է. Ա. Կլիմովը, Ն. Վ. Կուզմինը, Յու. Ն. Կուլյուտկինը, Ա. Կ. Մարկովան, Լ. Մ. Միտինան, Ա. Ի. Շչերբակովը, Ռ. Ե. Պետրոպյանը, ընդ որում նրանց կողմից օգտագործվում է «անձի մասնագիտական կայացում» հասկացությունը:

Նրանք անձի մասնագիտական զարգացումը դիտարկում են երկու տեսանկյունից.

- ըստ գործընթացի սխեմայի (որպես քայլերի, ժամանակաշրջանների, փուլերի ժամանակավոր հաջորդականություն),
- ըստ գործունեության կառուցվածքի (որպես դրա մեթոդների և միջոցների մի ամբողջություն, որտեղ դրանց հաջորդականությունը

միմյանց ոչ թե ժամանակավոր, այլ նպատակային որոշում ունի):

Մակայն նրանք համալիր ձևով չեն անդրադարձել անձի մասնագիտական զարգացման խնդրին, մինչդեռ ժամանակակից մանկավարժագետների մի մասը (Օ. Ա. Աբդուլինա, Ա. Յու. Բելոգուրով, Ա. Կ. Մարկովա, Կ. Ա. Նեֆեդովա, Է. Ի. Պասով, Ն. Ա. Ֆիլիպովա, Գ. Հակոբյան, Լ. Միքաելյան, Լ. Սահակյան, Լ. Շահբազյան և այլք), քննության առնելով ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրը՝ նշում է, որ ուսուցիչների մասնագիտական զարգացումը բազմակողմ գործընթաց է, ներառյալ՝ ոչ միայն համապարանում ձեռք բերված մասնագիտական գիտելիքների թարմացումն ու ընդհանրացումը, այլև մասնագիտական էթիկային և մանկավարժական մշակույթին գործնականում տիրապետումը, ինչպես նաև մասնագիտական կարողունակությունների ընդլայնումը և մեթոդական պատրաստվածության չափանիշները, որոնք անհրաժեշտ են ուսուցչին մասնագիտական և մանկավարժական գործառնությունների լիարժեք իրականացման համար:

Մասնագիտական կարողունակության (կոմպետենտության) տիրապետման հիմնախնդիրը հետազոտվել է մանկավարժ գիտնականներ Ի. Լ. Բիմի, Վ. Ա. Կան-Կալիկի, Ն. Վ. Կուզմինայի, Ա. Ա. Լեոնտևի, Ռ. Ե. Պետրոպյանի և այլոց կողմից:

Ուսուցչի մասնագիտական կարողունակության զարգացման վերբերյալ վերը թվարկված գիտնականների տեսական, հայեցակարգային մոտեցումների և դիրքորոշումների վերլուծությունը տեսական հիմք հանդիսացավ առանձնացնելու դրա հիմնական բաղադրիչները, **որնք հետևյալն են.**

- անձնական զարգացման կողմնորոշում,
- մասնագիտական մտածողության զարգացում,
- մանկավարժական և հարակից առարկաներից գիտելիքների և մեթոդական-տեխնոլոգիական գիմնանոցը շարունակական թարմացման, նոր կարողունակությունների ու հմտությունների ձեռք բերման մշտական պահանջմունք,
- մանկավարժական ռազմավարություն և հեռանկար մշակելու կարողություն,
- ստեղծագործաբար մտածելու կարողություն,
- նորարական և նորամուծական գործունեության, նորամուծությունների յուրացման պահանջմունք,
- մանկավարժական գիտության նորագույն նվաճումները յուրացնելու և գործնականում ներդնելու կարողություն,
- մասնագիտական գործունեության ոլորտում միջազգային փորձի տեղայնացման պատրաստականություն:

**Եզրակացություն**

Ելնելով վերորերյալ դիտարկումներից և հայեցակարգային մոտեցումներից՝ մենք հանգեցինք այն գիտական հետևություններ, որ ուսուցչի մասնագիտական զարգացումը և կատարելագործումը նրա մանկավարժական գործունեության որակի բարձրացման, մասնագիտական կարողունակությունների և ռեֆլեքսիվ հմտությունների շարունակական զարգացման և ինքնազարգացման, մեթոդական և թվային մշակույթի բարձր մակարդակի տիրապետման, նորամուծությունների մշակման ու ներդրման, ստեղծագործական լաբորատորիայի և հետազոծի կատարելագործման, ինչպես նաև մասնագիտական ակմեին հասնելու ամբողջական գործընթաց է:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. **Ասատրյան Լ. Թ. և ուրիշներ**, Մանկավարժության պատմություն, ուսումնա-մեթոդական ձեռնարկ բուհերի համար: – Երևան, Արտագերս. 2020: – 592 էջ:
2. **Միրումյան Վ.**, Անանիա Ծիրակացի: – Երևան, «Լուսարաց հրատարակչություն», 2012: – 256 էջ:
3. Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացույ յաղագրություն մարդոյ: – Վենետիկ, 1889, էջ 64:
4. **Батищев Г. С.** Найти и обрести себя. Особенности культуры глубинного общения // Вопросы философии.-1995. №3. С.103-129.
5. **Бердяев Н. А.** Философия свободы. Смысл творчества. – М.: Педагогика, 1989. – 607 с.
6. **Каган М. С.** Человеческая деятельность. – М.: Просвещение, 1974. – 204 с.
7. **Каган М. С.** Мир общения: проблемы межсубъективных.-М.: Полит.изд, 1988.-320с.

8. **Кант И.** Лекции по этике: Пер. с нем. / Общ. ред., сост. и вступ. ст. А. А. Гусейнова. – М.: Республика, 2000. – 431 с.
9. **Левин Г. Д.** Свобода и покинутость. Методологический анализ // Вопросы философии. 1997. №1. С. 56-68.
10. **Леонтьев А. Н.** Деятельность, сознание. Личность. Изд.2-е. – М.: Политиздат, 1977. – 304 с.
11. **Мирумян К. А.** Антология армянской педагогической мысли. – Ер., 2019. – 684 с.
12. **Моисеев Н. Н., Иванилов Ю. П., Столярова Е. М.** Методы оптимизации. – М.: «Наука», 1978. – 351 с.
13. **Ницше Ф.**, По ту сторону добра и зла, [пер. с немец. Е. Соколовой]. – М.: РИПОЛ классик; – СПб: ООО Изд ательство Пальмира, 2017. – 253с.
14. **Сластенин В. А., Чижаква Г.И.**, Введение в педагогическую аксиологию, М. Академия, 2003.,192с
15. **Сластенин В. А.,Исаев И. Ф., Шинянов Е. Н.,** Педагогика; 8-е издание.-. М.:Академия. 2008.,- 576 с.
16. **Сократ. Платон. Аристотель. Сенека:** Биограф, очерки: сборник. – Ростов-на-Дону: Феникс, 1998. – 411 с.
17. **Соловьев В. С.** Сочинения: В 2т. / Общ. ред. и сост. А. В. Гулыги, А.Лосева.Примеч.С. Л. Кравца и др. – М.: Мысль, 1988.-822с.
18. **Соловёв В. С.** Избранное / Сост. А. В. Гулыги, С. Л. Кравца. – М.: Сов. Россия, 1990. – 496 с.
19. **Цукерман Г. А.** Виды общения в обучении. – Томск, Пеленг, 1993. – 268 с.

Տճանա/Հանձնվել է՝ 01.04.2025  
Рецензирована/Գրախոսվել է՝ 07.04.2025  
Принята/Ընդունվել է՝ 14.04.2025